Երկրորդ ընթերցում

Լրամշակված տարբերակ

Կ-204-21.03.2022-ՏՏԳՇ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» 1997 թվականի հունիսի 24-ի ՀՕ-137 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 27– րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա) համայնքի ղեկավարի ներկայացմամբ համայնքի ավագանու կողմից ընդունված համայնքի զարգացման հնգամյա ծրագրի, համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագրի հիման վրա համայնքային նշանակության հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների պլանավորումը.:»:

Հոդված 2. Օրենքի 27-րդ հոդվածից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 27.1-ին հոդվածով՝

«Հոդված 27.1. Համայնքների միջնաժամկետ ծախսերի ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը

1. Համայնքների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը բաղկացած է երկու մասից՝

1) համայնքի եկամուտները շարադրող մաս.

2) համայնքի ծախսային քաղաքականությունը շարադրող մաս:

2. Եկամուտները շարադրող մասը պետք է պարունակի տեղեկություններ՝

1) համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագրի երեք տարվա (առաջիկա բյուջետային տարվա և դրան հաջորդող երկու տարիների) կտրվածքով եկամուտների կանխատեսումների և դրանց ռիսկերի վերաբերյալ.

2) եկամուտների ստացման/հավաքագրման ուղղությամբ աշխատանքների ընթացքի գնահատականի և նախորդ միջնաժամկետ ծախսերի ծրագրով համայնքների եկամուտների ցուցանիշների փոփոխությունների վերաբերյալ՝ նախորդ միջնաժամկետ ծախսերի ծրագրում տեղ գտած եկամուտների ցուցանիշների նկատմամբ շեղումների կամ փոփոխությունների բացատրությամբ.

3) համայնքի հնգամյա զարգացման ծրագրի և այլ տնտեսական ծրագրերի վերաբերյալ, որոնց հիման վրա պատրաստվել են կանխատեսումները՝ դրանց կարևորության հիմնավորմամբ:

3. Ծախսային քաղաքականությունը պարունակում է հետևյալ տեղեկությունները՝

1) այն արդյունքները, որոնց համայնքը ցանկանում է հասնել համայնքի կողմից իրականացվելիք ծրագրերի շրջանակներում ծախսեր կատարելու միջոցով.

2) ծախսային գործոնները, այդ թվում՝ ակնկալվող տնտեսական և սոցիալական միտումները, որոնք կանխատեսվող ժամանակաշրջանի ընթացքում կազդեն տվյալ համայնքում իրականացվելիք ծախսերի վրա.

3) համայնքի գերակայություններն ու առաջնահերթությունները կանխատեսվող ժամանակաշրջանում, այդ թվում՝ առաջիկա տարվա համայնքների բյուջեների նախագծով նախատեսված.

4) տվյալ համայնքում արտաքին ֆինանսական աջակցության չափերը և աղբյուրները:»:

Հոդված 3. Օրենքի 31– րդ հոդվածում՝

1. 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Համայնքի բյուջեի նախագիծը կազմվում է հիմքում դնելով համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ տվյալ բյուջետային տարվա հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների պլանավորման հիման վրա:»:

2. 1-ին մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 1 -ից 8 -րդ կետեր՝

«1) Համայնքի բյուջեի նախագծի մշակման գործընթացը բաղկացած է երկու փուլից՝

ա. առաջիկա տարվա համայնքի բյուջեի նախագծի մշակման համար պատշաճ ծրագրային հիմքեր ստեղծելու նպատակով առաջիկա երեք տարվա՝ համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակում.

բ. առաջիկա տարվա համայնքի բյուջեի նախագծի մշակում:

2) Առաջիկա երեք տարվա՝ համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակման նպատակն է հնարավորություն ստեղծել համայնքի համար միջնաժամկետ հատվածում կառավարելու համայնքի ֆինանսական ռեսուրսները: Միջնաժամկետ ծախսերի ծրագիրը ծառայում է հիմք՝ համայնքի բյուջեի նախագծի մշակման աշխատանքների համար:

3) Համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակումն իրականացվում է սույն օրենքով, մեթոդական ցուցումներով և համայնքի ավագանու որոշմամբ սահմանված ժամկետներում:

4) Առաջիկա տարվա բյուջետային գործընթացն սկսելու մասին Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ սահմանված ժամկետներում պետական լիազորված մարմինը իրավական հսկողության բարձրագույն մարմնի միջոցով տեղական ինքնակառավարման մարմիններին տրամադրում է վերջիններիս համար պարտադիր բնույթ կրող համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագրի նախագիծը կազմելու մեթոդական ցուցումները: Միջնաժամկետ ծախսերի ծրագրի նախագիծը կազմելու մեթոդական ցուցումներում ներկայացվում են համայնքների կողմից մշակվող միջնաժամկետ ծրագրերի նախագծերին ներկայացվող ընդհանուր պահանջները և այդ նախագծերի ներկայացման կարգը:

5) Բյուջետային հիմնարկները կազմում և համայնքի ղեկավարին են ներկայացնում իրենց միջնաժամկետ ծախսերի ծրագրերը՝ համայնքի ավագանու որոշմամբ սահմանված ժամկետում:

6) Բյուջետային հիմնարկի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը ստորագրում է բյուջետային հիմնարկի ղեկավարը:

7) Իր պարտականությունները կատարելու համար համայնքի ղեկավարը իրավասու է բյուջետային հիմնարկներից պահանջել և ստանալ անհրաժեշտ տեղեկությունները:

8) Համայնքի ղեկավարը համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագրի նախագիծը ամփոփում, կազմում և ՀՀ կառավարության կողմից հաստատված պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի հրապարակումից հետո՝ մեկամսյա ժամկետում ներկայացնում է համայնքի ավագանու հաստատմանը: Հաստատումից հետո եռօրյա ժամկետում այն հրապարակվում է համայնքի պաշտոնական համացանցային կայքէջում և ներկայացվում է համապատասխան մարզպետին:

3. 7-րդ մասի բ) կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«բ) համայնքի ղեկավարի զեկույցը բյուջետային տարվա համայնքի զարգացման հիմնական ուղղությունների, ինչպես նաև համայնքի բյուջեի հիմքում դրված համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագրի մասին,»:

Հոդված 4. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով լրացվող 4-րդ և 8-րդ կետերն ուժի մեջ են մտնում 2023թ-ի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով լրացվող 4-րդ կետի դրույթների վերաբերյալ ներկայացվող 2023-2025թթ. համար՝ պետական լիազորված մարմինը իրավական հսկողության բարձրագույն մարմնի միջոցով տեղական ինքնակառավարման մարմիններին կտրամադրի մինչև 2022թ. օգոստոսի 10-ը:

3. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով լրացվող 8-րդ կետի դրույթների վերաբերյալ համայնքի ղեկավարը 2023-2025թթ. համար համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագրի նախագիծը ամփոփում, կազմում և ներկայացնում է համայնքի ավագանու հաստատմանը միչև 2022թ. սեպտեմբերի 10-ը: Հաստատումից հետո եռօրյա ժամկետում այն հրապարակվում է համայնքի պաշտոնական համացանցային կայքէջում և ներկայացվում է համապատասխան մարզպետին:

4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 1997 թվականի հունիսի 24-ին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 2. Օրենքի 27-րդ հոդվածից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 27.1-~~րդ~~ ~~ին~~ հոդվածով՝

«Հոդված 27.1. Համայնքների միջնաժամկետ ծախսերի ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը~~.~~

1. Համայնքների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը բաղկացած է երկու մասից՝

~~1.~~1) համայնքի եկամուտներ~~ը~~~~ի քաղաքականությունը~~ շարադրող մաս.

~~1.~~2) համայնքի ~~հնգամյա զարգացման ծրագրից բխող~~ ծախսային քաղաքականությունը շարադրող մաս:

2. Եկամուտներ~~ը~~~~ի~~ ~~քաղաքականությունը~~ շարադրող մասը պետք է պարունակի տեղեկություններ՝

~~2.1 առաջիկա երեք տարիների համար համայնքի եկամուտների մասին բովանդակային և հաշվարկային հիմնավորումներ.~~

~~2.2 եկամուտների ուղղությամբ աշխատանքների ընթացքի գնահատականի և նախորդ տարվա համայնքի բյուջեով եկամուտների ցուցանիշների փոփոխությունների վերաբերյալ՝ նախորդ երեք տարվա համայնքային բյուջեով եկամուտների քաղաքականության նպատակների և/կամ ցուցանիշների նկատմամբ շեղումների կամ փոփոխությունների բացատրություն.~~

~~2.3 համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագրի երեք տարվա (առաջիկա բյուջետային տարվա և դրան հաջորդող երկու տարիների) կտրվածքով բոլոր տեսակի եկամուտների ուղղությամբ կանխատեսումների վերաբերյալ.~~

~~2.4 համայնքի հնգամյա զարգացման ծրագրի, սոցիալ տնտեսական և այլ ենթադրությունների վերաբերյալ, որոնց հիման վրա պատրաստվել են կանխատեսումները, դրանց կարևորության հիմնավորմամբ, հիմնական ռիսկերի վերաբերյալ:~~

1) համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագրի երեք տարվա (առաջիկա բյուջետային տարվա և դրան հաջորդող երկու տարիների) կտրվածքով եկամուտների կանխատեսումների և դրանց ռիսկերի վերաբերյալ.

2) եկամուտների ստացման/հավաքագրման ուղղությամբ աշխատանքների ընթացքի գնահատականի և նախորդ միջնաժամկետ ծախսերի ծրագրով համայնքների եկամուտների ցուցանիշների փոփոխությունների վերաբերյալ՝ նախորդ միջնաժամկետ ծախսերի ծրագրում տեղ գտած եկամուտների ցուցանիշների նկատմամբ շեղումների կամ փոփոխությունների բացատրությամբ.

3) համայնքի հնգամյա զարգացման ծրագրի և այլ տնտեսական ծրագրերի վերաբերյալ, որոնց հիման վրա պատրաստվել են կանխատեսումները՝ դրանց կարևորության հիմնավորմամբ:

3. Ծախսային քաղաքականությունը պարունակում է հետևյալ տեղեկությունները՝

~~3.~~1) այն արդյունքները որոնց համայնքը ցանկանում է հասնել համայնքի կողմից իրականացվելիք ծրագրերի շրջանակներում ծախսեր կատարելու միջոցով.

~~3.~~2) ծախսային գործոնները, այդ թվում՝ ակնկալվող տնտեսական և սոցիալական միտումները, որոնք կանխատեսվող ժամանակաշրջանի ընթացքում կազդեն տվյալ համայնքում իրականացվելիք ծախսերի վրա.

~~3.3 համայնքի գերակայությունները կանխատեսվող ժամանակաշրջանում՝ միջնաժամկետ ծախսերի ծրագրի երեք տարվա կտրվածքով ծախսերի ուղղությամբ կանխատեսումների վերաբերյալ.~~

3) համայնքի գերակայություններն ու առաջնահերթությունները կանխատեսվող ժամանակաշրջանում, այդ թվում՝ առաջիկա տարվա համայնքների բյուջեների նախագծով նախատեսված.

~~3.~~4) տվյալ համայնքում արտաքին ֆինանսական աջակցության չափերը և աղբյուրները:»:

Հոդված 3. Օրենքի 31– րդ հոդվածում՝

1) հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Համայնքի բյուջեի նախագիծը կազմվում է հիմքում դնելով համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ տվյալ բյուջետային տարվա հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների պլանավորման հիման վրա:»:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ ~~1.1-1.6-րդ~~ 1-ից 8-րդ ~~մասեր~~ կետեր՝

«~~1.~~1) Համայնքի բյուջեի նախագծի մշակման գործընթացը բաղկացած է երկու փուլից՝

ա.~~)~~ առաջիկա տարվա համայնքի բյուջեի նախագծի մշակման համար պատշաճ ծրագրային հիմքեր ստեղծելու նպատակով առաջիկա երեք տարվա՝ համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակում.

բ.~~)~~ առաջիկա տարվա համայնքի բյուջեի նախագծի մշակում:

~~1.~~2) Առաջիկա երեք տարվա՝ համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակման նպատակն է հնարավորություն ստեղծել համայնքի համար միջնաժամկետ հատվածում կառավարելու համայնքի ֆինանսական ռեսուրսները: Միջնաժամկետ ծախսերի ծրագիրը ծառայում է հիմք՝ համայնքի բյուջեի նախագծի մշակման աշխատանքների համար:

~~1.~~3) Համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակումն իրականացվում է սույն օրենքով, մեթոդական ցուցումներով և համայնքի ավագանու որոշմամբ սահմանված ժամկետներում:

~~1.~~4) Առաջիկա տարվա բյուջետային գործընթացն սկսելու մասին Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ սահմանված ժամկետներում պետական լիազորված մարմինը իրավական հսկողության բարձրագույն մարմնի միջոցով տեղական ինքնակառավարման մարմիններին տրամադրում է վերջիններիս համար պարտադիր բնույթ կրող համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագրի նախագիծը կազմելու մեթոդական ցուցումները: Միջնաժամկետ ծախսերի ծրագրի նախագիծը կազմելու մեթոդական ցուցումներում ներկայացվում են համայնքների կողմից մշակվող միջնաժամկետ ծրագրերի նախագծերին ներկայացվող ընդհանուր պահանջները և այդ նախագծերի ներկայացման կարգը:

~~1.5) Համայնքային կազմակերպությունները կազմում և համայնքի ղեկավարին են ներկայացնում իրենց միջնաժամկետ ծախսերի ծրագրերը՝ առաջիկա տարվա բյուջետային գործընթացն սկսելու մասին համայնքի ավագանու որոշմամբ սահմանված ժամկետում:~~

5) Բյուջետային հիմնարկները կազմում և համայնքի ղեկավարին են ներկայացնում իրենց միջնաժամկետ ծախսերի ծրագրերը՝ համայնքի ավագանու որոշմամբ սահմանված ժամկետում:

6) Բյուջետային հիմնարկի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը ստորագրում է բյուջետային հիմնարկի ղեկավարը:

7) Իր պարտականությունները կատարելու համար համայնքի ղեկավարը իրավասու է բյուջետային հիմնարկներից պահանջել և ստանալ անհրաժեշտ տեղեկությունները:

~~1.6~~ 8) Համայնքի ղեկավարն համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագրի նախագիծը ամփոփում, կազմում և ~~մինչև ընթացիկ տարվա հոկտեմբերի 10-ը~~ ՀՀ կառավարության կողմից հաստատված պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի հրապարակումից հետո՝ մեկամսյա ժամկետում ներկայացնում է համայնքի ավագանու հաստատմանը: Հաստատումից հետո եռօրյա

ժամկետում այն հրապարակվում է համայնքի պաշտոնական համացանցային կայքէջում և ներկայացվում է համապատասխան մարզպետին:

3) հոդվածի 7-րդ մասի բ) կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«բ) համայնքի ղեկավարի զեկույցը բյուջետային տարվա համայնքի զարգացման հիմնական ուղղությունների ինչպես նաև համայնքի բյուջեի հիմքում դրված համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագրի տեղեկատվության մասին,»:

Հոդված 4. ~~Օրենքի 43-րդ հոդվածում ավելացնել նոր 7-րդ մաս հետևյալ բովանդակությամբ.~~

~~«7. Պետական լիազորված մարմինը իրավական հսկողության բարձրագույն մարմնի միջոցով տեղական ինքնակառավարման մարմիններին տրամադրում է վերջիններիս համար պարտադիր բնույթ կրող 2023-2025թթ. համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագրի նախագիծը կազմելու մեթոդական ցուցումները մինչև օգոստոսի 10-ը:»:~~

1. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով լրացվող 4-րդ և 8-րդ կետերն ուժի մեջ են մտնում 2023թ-ի հունվարի 1-ից:

2. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով լրացվող 4-րդ կետի դրույթների վերաբերյալ ներկայացվող 2023-2025թթ. համար՝ պետական լիազորված մարմինը իրավական հսկողության բարձրագույն մարմնի միջոցով տեղական ինքնակառավարման մարմիններին կտրամադրի մինչև 2022թ. օգոստոսի 10-ը:

3. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով լրացվող 8-րդ կետի դրույթների վերաբերյալ համայնքի ղեկավարը 2023-2025թթ. համար համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագրի նախագիծը ամփոփում, կազմում և ներկայացնում է համայնքի ավագանու հաստատմանը մինչև 2022թ. սեպտեմբերի 10-ը: Հաստատումից հետո եռօրյա ժամկետում այն հրապարակվում է համայնքի պաշտոնական համացանցային կայքէջում և ներկայացվում է համապատասխան մարզպետին:

4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

~~**Հոդված 5.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:~~

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», (Կ-204-21.03.2022-ՏՏԳԾ-011/1) «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-204[1]-21.03.2022-ՏՏԳԾ-011/1) և «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-204[2]-21.03.2022-ՏՏԳԾ-011/1) ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ օրենքի նախագիծ					

1.	ՀՀ կառավարություն	**2-րդ հոդված**	2-րդ հոդվածով շարադրված 27.1-րդ հոդվածում՝ 1-ին մասի 1.1-րդ կետից և 2-րդ մասից հանել «քաղաքականությունը» բառը, 1-ին մասի 1.2-րդ կետից հանել «–հնգամյա զարգացման ծրագրից բխող » բառերը, հանել 2.1-րդ, 2.2-րդ, 2.3-րդ, 2.4-րդ մասերը, լրացնել 27.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կետեր հետևյալ բովանդակությամբ. « 1) համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագրի երեք տարվա (առաջիկա բյուջետային տարվա և դրան հաջորդող երկու տարիների) կտրվածքով եկամուտների կանխատեսումների և դրանց ռիսկերի վերաբերյալ. 2) եկամուտների ստացման/հավաքագրման ուղղությամբ աշխատանքների ընթացքի գնահատականի և նախորդ միջնաժամկետ ծախսերի ծրագրով համայնքների եկամուտների ցուցանիշների փոփոխությունների վերաբերյալ՝ նախորդ միջնաժամկետ ծախսերի ծրագրում տեղ գտած եկամուտների ցուցանիշների նկատմամբ շեղումների կամ փոփոխությունների բացատրությամբ. 3) համայնքի հնգամյա զարգացման ծրագրի և այլ	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է

			տնտեսական ծրագրերի վերաբերյալ, որոնց հիման վրա պատրաստվել են կանխատեսումները՝ դրանց կարևորության հիմնավորմամբ:»:		
2.	ՀՀ կառավարություն	**Նախագծի հոդված 2**	2-րդ հոդվածով շարադրված 27.1-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել նոր 3-րդ կետով՝ «3) համայնքի գերակայություններն ու առաջնահերթությունները կանխատեսվող ժամանակաշրջանում, այդ թվում՝ առաջիկա տարվա համայնքների բյուջեների նախագծով նախատեսված.» և հանել 27.1-րդ հոդվածի 3.3-րդ մասը:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն	
3	ՀՀ կառավարություն	**Նախագծի հոդված 3**	3-րդ հոդվածով շարադրված Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի վերջում լրացնել « Միջնաժամկետ ծախսերի ծրագրի նախագիծը կազմելու մեթոդական ցուցումներում ներկայացվում են համայնքների կողմից մշակվող միջնաժամկետ ծրագրերի նախագծերին ներկայացվող ընդհանուր	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն	

			պահանջները և այդ նախագծերի ներկայացման կարգը:» նախադասությունը , լրացնել նոր 5-րդ, 6-րդ, 7-րդ կետեր. «5) Բյուջետային հիմնարկները կազմում և համայնքի ղեկավարին են ներկայացնում իրենց միջնաժամկետ ծախսերի ծրագրերը՝ համայնքի ավագանու որոշմամբ սահմանված ժամկետում: 6) Բյուջետային հիմնարկի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը ստորագրում է բյուջետային հիմնարկի ղեկավարը: 7) Իր պարտականությունները կատարելու համար համայնքի ղեկավարը իրավասու է բյուջետային հիմնարկներից պահանջել և ստանալ անհրաժեշտ տեղեկությունները:»		
4	ՀՀ կառավարություն	**Նախագծի հոդված 4**	4-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.«Հոդված 4 1.Սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով լրացվող 4-րդ և 8-րդ կետերն ուժի մեջ են մտնում 2023թ-ի հունվարի 1-ից: 2. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով լրացվող 4-րդ կետի դրույթների վերաբերյալ ներկայացվող 2023-2025թթ. համար՝ պետական լիազորված մարմինը իրավական հսկողության բարձրագույն մարմնի	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն	

			միջոցով տեղական ինքնակառավարման մարմիններին կտրամադրի մինչև 2022թ. օգոստոսի 10-ը: 3. Սույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով լրացվող 8-րդ կետի դրույթների վերաբերյալ համայնքի ղեկավարը 2023-2025թթ. համար համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագրի նախագիծը ամփոփում, կազմում և ներկայացնում է համայնքի ավագանու հաստատմանը միչև 2022թ. սեպտեմբերի 10-ը: Հաստատումից հետո եռօրյա ժամկետում այն հրապարակվում է համայնքի պաշտոնական համացանցային կայքէջում և ներկայացվում է համապատասխան մարզպետին: 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:		
5	ՀՀ կառավարություն	**Նախագծի հոդված 5**	Նախագծից հանել 5-րդ հոդվածը և նախագծի հոդվածների մասերը, կետերը համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն	

	«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» **օրենքի նախագիծ**				
6	ՀՀ կառավարություն	**Նախագծի 1-ին հոդված**	1-ին հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ. «**Հոդված 1.** «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11–րդ հոդվածի 5-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.2-ին կետով. 3.2) համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը.»:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն	
7	ՀՀ կառավարություն	**Նախագծի հոդված 6**	6-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ. «**Հոդված 6.** Օրենքի 84–րդ հոդվածի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հոդված 84. Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի, միջնաժամկետ ծախսերի ծրագրի և բյուջեի կառավարման գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցությունը:»:	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն	

8	ՀՀ կառավարություն	Նախագծի հոդված 7	7-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.« **Հոդված 7.** Օրենքի 84–րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2. Համայնքի ղեկավարը մինչև համայնքի հնգամյա զարգացման ծրագրի, համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագրի կամ տարեկան բյուջեի նախագծերը համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելը կազմակերպում և անցկացնում է հանրային բաց լսումներ կամ քննարկումներ՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասը: Հանրային բաց լսումներում կամ քննարկումներում ստացված և ընդունված առարկությունների և առաջարկությունների վերաբերյալ համայնքի ղեկավարը տրամադրում է տեղեկատվություն համայնքի ավագանուն:»	Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն	